

անհրաժեշտ է հիշատակել հայկական ձեռագործության վարպետների շար-  
քում: Մյուս կողմից, քննարկվող ձեռագործն այն հազվագյուտ օրինակ-  
ներից է, որն ուղեկցվում է դեռ իր ստեղծման ժամանակի ղեհատման  
պարզաներով, դառնալով Քուրսայի հայկական ասեղնագործության դպրո-  
ցի պատմությունն առավել ամբողջական տիրկայացնելու փաստացի նյութ:

Կ.Վ.ՍԵՂՈՍԵԱՆ

ՀԱԻ

ՏՆԱԹԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՇԵՍՏՆԵՐԻ ԳԱՍԱՊԱՏՄԱՆ

ՀԱՐՑԻ ԵՈՒՐՔ

1. Այս խնդրում ներկայումս, մասնավորապես արհեստագործու-  
թյանը վերաբերող ուսումնասիրություններում, հասակությունն չկա:  
Այն անորոշությունն ունի մասնավոր Անդրկուկասի և Հայաստանի արե-  
սեսական ու հասարակական կենցաղի հատկապես XIX դ. երկրորդ կեսի  
նկարագրություններում: Արտադրական կենցաղի յուրօրինակ պայման-  
ներում արհեստագործության բնագավառի շատ դրսևորումներ այստեղ  
կրում են արևելյան կենցաղավարման երանգ:

2. Հայտնի է, որ աշխատանքի հասարակական բաժանման աստիճանին  
համապատասխան, գյուղացիական բնափակ տնտեսության մեջ, նախ, առա-  
ջանում է տնայնագործությունը: Հետո, առանձին պատվերների կատար-  
մամբ՝ հանդես են գալիս արհեստների նոր մյուղեղ և, վերջապես,  
շուկայի հետ կապված մանր ապրանքային արտադրություն՝ արհեստ-  
գործություն: Վերջին երկուսն աստիճանաբար սկսում են կապվել քա-  
ղաքների և քաղաքային կենցաղի հետ: Այս փոխակերպումներն ամենու-  
րեք ոչ միտեսակ են տեղի ունենում:

3. Հետոեֆորմյան շրջանում, դանդաղ զարգացող կապիտալիստա-  
կան արտադրության պայմաններում արտադրության ստորին ձևերից  
բարձրագույնների փոխակերպումները նկատելի անորոշություն են  
մտցնում տնայնագործության և արհեստների նախկին բնորոշումների  
մեջ: Գրանց սկսում են բնորոշվել տարբեր հատկանիշներով ու արտա-  
հայտություններով: Առաջացած տերմինները վերագրվում են թե տնայ-  
նագործությանը, թե արհեստին, ինչպես, օրինակ՝ տնային զբաղմունք-  
ներ, գյուղացիական արհեստներ, տնայնագործություն, տնայնագործա-  
կան արդյունաբերություն կամ տնային արդյունագործություն, քաղա-  
քային արհեստներ, գյուղացիական արդյունաբերություն, նաև՝ ար-  
հեստագործություն և այլ ընդհանրացնող տերմիններ: Այս ամենը հե-  
տևանց էր արտադրության ձևերի զարգացման, որոնք տեղի էին ունե-

նում աստիճանաբար՝ անցնելով իրար միահյուսվող անցողիկ ձևերի մի-  
ջով:

4. Արտադրության ձևերի գիտական հստակ դասակարգումն ու համա-  
պատասխան տերմինների մշակումն օգտագործումը, այսպիսով, դառնում է  
անհրաժեշտություն: Ուրեմն, ելնելով այն բանից, որ տնայնագործու-  
թյունն ու արհեստները հասարակության արտադրական կենցաղի կարևո-  
րագույն բաղադրամասերն են, դրանք պետք է դիպվեն նաև ազգագրական  
գիտության տեսանկյունով: Դա հարավորություն է <sup>կենցաղամշակութային</sup> ընձեռնում տարբեր  
ասպեկտներով դիտարկելու արհեստագործության այդ կարևոր մյուզե-  
րի զարգացման ընթացքը հատկապես XIX դ. - XX դ. սկզբներին և ավելի  
ուշ ժամանակաշրջանում:

5. Տնայնագործության և արհեստների դասագտման, դրանց միջև  
եղած արտադրության անցողիկ և մնայուն ձևերի տարբերակման խնդ-  
րում, այսպիսով, առաջնահերթ բնորոշիչներ են դառնում նաև դրանց  
արտադրական կենցաղից բխող հատկանիշները, մասկանդ մասնագիտաց-  
ման, որակավորման, զբաղվածության, աշխատանքի ներքին կազմակերպ-  
վածության առանձնահատկությունները, ինչպես և դրանց փոխհարաբե-  
րակցությունը համայնքի, վարչական և պետական մարմինների հետ:  
Այդ մոտեցմամբ էլ առաջադրում ենք արհեստագործության հիշյալ  
մյուզերի բնութագրերը:

6. Տնայնագործությունն առավելապես գյուղացիական արհեստագոր-  
ծության մյուզ է, որն իրականացվում է հիմնականում տնային պայ-  
մաններում կատարվող ձեռքի աշխատանքով՝ պարզունակ, մեծ մասամբ  
ինքնաշեն գործիքներով: Տնայնագործն արտադրում է ինչպես սեփա-  
կան կարիքները հոգալու, այնպես էլ լրացուցիչ եկամուտ ունենալու  
նպատակով՝ պատվիրատուի և շուկայական մանր ապրանքային պահանջ-  
մունքները բավարարելու համար: Նա արհեստագործությունը զբաղվում  
է գյուղատնտեսությանը, տնային տնտեսությանը կամ տնտեսական այլ  
զբաղմունքներին զուգահեռ՝ դրանցից ազատ, չոգլամենտավորված  
ժամանակահատվածներում, իր կամ պատվիրատուի հույսով: Տնայնա-  
գործ-արհեստավորն աշխատում է գերազանցապես միայնակ՝ ընտանիքի  
անդամների օգնությամբ կամ հարևանների, նաև պատվիրատուի տարբեր  
եղանակներով փոխհատուցվող օժանդակությամբ:

7. Արհեստը հիմնականում քաղաքային արհեստագործության  
մյուզ է, որի կրողները՝ արհեստավորներն արտադրում են ժանր կից  
կամ առանձին արհեստանոց-կրպակում, նաև դրսում՝ կատարելագործ-  
ված ինքնաշեն գործիքների հետ օգտագործելով նաև պատվերով պատ-  
րասոված կամ գործարտաշին արտադրության հաստոցներ, հարմարանք-

ներ ու գործիքներ: Արհեստավորներն աշխատում և արտադրում են որոշակի կազմակերպված ու կազմակերպված ընկերություններում և աշխատանքի ներքին բաժանմանը համապատասխան, ռեզիմենտավորված ժամանակահատվածում: Տնտեսական այլ զբաղմունքներից զրեթե լիովին ազատ, արհեստավորներն արտադրում են, նախ, պատվիրատուի հումքով՝ նրա համար, ապա նաև ձեռքբերովի հումքով՝ քաղաքային ու գյուղական, հիմնականում ավանդական կենցաղից բխող շուկայական մանր ապրանքային պահանջմունքները բավարարելու համար: Նրանց ապրուստի հիմնական միջոցն արտադրանքի դիմաց ստացված եկամուտն է: Առավելապես օգնականներով ու աշակերտներով, ինչպես և միայնակ աշխատող արհեստավորները հանձնին համբարությունների ձեռք են բերում ներքին ինքնավարութուն, սովորութային իրավունքով սահմանված կարգ և, ի դեմս տեղական ու պետական մարմինների, ստանձնում հարկային ու այլ կարգի պարտականություններ ու պարտավորություններ:

8. Այս բնութագրերը հասկեցնում են նաև արտադրութայն մեկ ձևից մյուսին անցնելու ընթացքում դրանց վրա հիմնվող կամ դրանցից անջատվող արտադրութայն անցողիկ կամ միջանկյալ ձևերի էական բնորոշումները, անվանումներն ու համապատասխան տերմինները /խան, արհեստանոց, գործատուն, ձեռնարկություն, մանուֆակտուրա, գործարան ևն /:

Հ. Ե. ՍԻՄՈՆՅԱՆ

ԵՊՀ

ԱՐՄԻԻ ԲԵՐԴՅԱՆ ՄՇԱԿՈՒՑԹԻ ԹԱՂԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

/վերին նավեր դամբառադաշտի պեղումների լույսի ներքո/

1. Ցուրածանշյուր կոնկրետ հնագիտական մշակույթի բնորոշ էթնոման ձեսի խտորեն սահմանված կարգ ու կանոն, կազմված արարողությունների հաջորդական, ժամանակի հավասարիքներով պատճառաբանված ընդհանրությունից: Այն իր ամբողջութայն մշակութային առավել կայուն և բնորոշ հատկանիշներից է, տարբերվում է մյուս մշակութային էթնոման ձեսերից, թեև դրա առանձին տարրեր կարող են պահպանվել և արտացոլվել հաջորդող մշակութային էթնոման ձեսերում:

2. Կարմիր սրդյան մշակույթի /XXIII - XVIII դդ. մ.թ.ա./ հուշարժանների մեծամասնությունը /70% / կազմում են